ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՁԵՌԱԳՐԵՐԻ Բ ԽՄԲԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 78 ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

□Կանոնագիրք Հայոց□ ժողովածուի առանձին և յուրօրինակ տարբերակ է ձեռագրերի Բ[1] խումբը: Կանոնագիրք ձեռագրերի այս խումբը, ծագելով ձեռագրերի Ա[2] խմբից, ընդգրկում է ոչ միայն Ա խմբի 58[3] կանոնախմբերը, այլև ունի հավելյալ կանոնախմբեր ևս:

Ուսումնասիրելով ձեռագրերի երկու խմբերի կառուցվածքն ու բնագրային առանձնահատկությունները՝ Վ. Հակոբյանն իր «Կանոնագիրք Հայոց» երկհատոր աշխատության մեջ ներկայացրել է երկու խմբերի առաջացման և զարգացման պատկերը[4]: Նա ձեռագրերի Բ - խումբը բաժանել է տարբեր ենթախմբերի[5]՝ ըստ կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունների՝ փորձելով ներկայացնել ձեռագրերի այս խմբի ծագումն ու զարգացումը[6]: Իր կատարած մանրազնին ուսումնասիրությունները հիմք են տվել նրան կարծելու, որ «X դարի 90-ական թվականներին Կանոնագրքում կանոնախմբերը թերևս ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու մղումով վերջիններս դասավորել են և ստեղծել կանոնագիրք ձեռագրերի մեր (Վ. Հակոբյան – Ն. Վ.) բաժանման Բ խումբը՝ նախ it, ապա ճոխացվե-

---

[1] *Ձեռագրերի այս խումբը բաղկացած է 78–81 կանոնախմբերից. այստեղ Հովհաննես Օձնեցու 32 կանոններից բաղկացած կանոնախումբը գտնվում է 36-րդ կամ 42-րդ համարների ներքո: Կանոնագիրք ձեռագրերի այս խմբերի պայմանական անվանումները տվել է Վ. Հակոբյանը [տե՛ս Կանոնագիրք Հայոց (այսուհետև՝ ԿՀ), աշխ. Վ. Հակոբյանի, հ. Ա, Ներածություն, Երևան, 1964, էջ XXX]:*

[2] *Ձեռագրերի այս խումբը բաղկացած է 57–60 կանոնախմբերից. այստեղ Հովհաննես Օձնեցու 32 կանոններից բաղկացած կանոնախումբը գտնվում է 24-րդ համարի ներքո:*

[3] *Մեր կարծիքով՝ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երկրորդ խմբագրողն օգտվել է Ա խմբի ձեռագրերի այն ենթախմբից, որն ընդգրկում է 58 կանոնախումբ: Այդ ենթախմբին են պատկանում Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) 6409, 8926, 795, 2635, 6496, 2655, 2596 թվահամարների ձեռագրերը: Նշյալ բոլոր ձեռագրերում ԾԸ (58) համարով համարակալված է «Կանոնք տեառն Սիմեւովնի՝ Աղուանից կաթողիկոսի, յետ կործանմանն Ներսէսի՝ Աղուանից կաթողիկոսի, որ վասն Քաղկեդոնին խորհելոյ և շփոթելոյ զԱղուանք մերժեցաւ ձաղանաւք ընդ ձեռն Եղիայի Հայոց կաթողիկոսի և ժողովոյն Աղուանից» կանոնախումբը (խորագիրն՝ ըստ 6409 ձեռագրի, թ. 136ա):*

[4] *Տե՛ս ԿՀ, հ. Ա, Ներածություն, էջ XXX–XL, ԿՀ, հ. Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Ներածություն, Երևան, 1971, էջ VII–XLI:*

[5] *Տե՛ս ԿՀ, հ. Ա, Ներածություն, էջ XXXII–XXXVIII:*

[6] *Տե՛ս ԿՀ, հ. Բ, Ներածություն, էջ XXI–XXV, XXX–XLI:*

լով հանդես են եկել befgq, hlou և asdkmpsv ենթախմբերը»[7]: Վ. Հակոբյանը Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացումը դնում է X դարի 90-ական թվականներին՝ հիմք ընդունելով Բ խմբի որոշ ձեռագրերում պահպանված, Հայոց կաթողիկոսների՝ աթոռակալության սկզբունքով գրված ցանկը, որն ավարտվում է 992 թ. Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի ընտրության և կաթողիկոս օծվելու հիշատակությամբ[8]: Այն փաստը, որ Սարգիս Ա Սևանցու գահակալության վերջին տարին նշված չէ, հիմք է տալիս նրան կարծելու, □որ կաթողիկոսների ցանկը կազմված պետք է լինի 992 թվականին կամ մոտակա հաջորդ մի քանի տարիներին□[9], իսկ այն, որ այդ ցանկը և պատմական բնույթի ոչ կանոնական մյուս բնագրերը befgq (Մաշտոցյան Մատենադարանի 8380, 783, 8006, 5148, 8236 թվահամարների) ձեռագրերում գտնվում են 40-րդ համարի ներքո գտնվող Եղիշեի «Վասն դիւահարաց» բնագրից հետո, բերում են այն եզրահանգման, որ այդ ժամանակ Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբը բաղկացած է եղել 40 կանոնախմբերից, որոնց հիման վրա էլ վերադասավորվել է ձեռագրերի Բ խումբը[10]: Այդ վերադասավորման սկզբնական վիճակը, ըստ Վ. Հակոբյանի, արտացոլված է Բ խմբի it (ՄՄ, 656 և 646 թվահամարների) ձեռագրերում, որոնց բովանդակության ցանկերում նշված են 40 (Ա–Խ) կանոնախմբերի վերնագրեր[11]: Բացի այդ՝ այս նույն ձեռագրերի առարկայական ցանկերում ևս 40 կանոնախմբերի ընդհանուր կարգահամարներն են նշած միայն, որոնք համապատասխանում են A (Ա խմբի հնագույն, 1098 թ. Կիլիկիայում ընդօրինակված, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանում պահվող 131 թվահամարի) ձեռագրի առարկայական ցանկին[12]՝ փոփոխված կարգահամարներով:

Մենք, համաձայնելով Վ. Հակոբյանի հետ, որ ՄՄ 656, 646, ինչպես նաև ՄՄ 9513 թվահամարների ձեռագրերում պահպանված բովանդակության և առարկայական ցանկերն արտացոլում են Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական տարբերակի բովանդակությունը, ուզում ենք, սակայն, հավելել, որ այն ընդգրկել է ոչ թե Ա խմբի 40, այլ 41 կանոնախմբեր: Այդ են փաստում թե՛ 1098 թ. ընդօրինակված Ա խմբի հնագույն ձեռագրի առարկայական ցանկը[13], թե՛ Բ խմբի բոլոր ձեռագ-

---

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ XXV:*

[8] *Տե՛ս նույն տեղում, էջ XXIV:*

[9] *Նույն տեղում, էջ XXIV–XXV:*

[10] *Տե՛ս նույն տեղում, էջ XXII:*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ XXI:*

[12] *Տե՛ս ԿՀ, հ. Ա, Ներածություն, էջ XXXVIII, տողատակ 2:*

[13] *Չնայած, որ այս ձեռագիրը պարունակում է 57 կանոնախմբեր, սակայն առարկայական ցանկում արտացոլված են միայն դրանցից 41-ի ընդհանուր կարգահամարները (տե՛ս ԿՀ, հ. Ա, էջ 5–17): Ինչպես և Վ. Հակոբյանը, մենք նույնպես օգտվել ենք այս ձեռագրի լուսանկարչական պատճենից (ՄՄ, Դրսի լուսանկարների հավաքածու, -203):*

ների կառուցվածքը: Այսպես՝ 1098 թ. ընդօրինակված Նոր-Ջուղայի վերը հիշատակված 131 թվահամարի Կանոնագրքի առարկայական ցանկի «Դ. Թէ զորս պարտ է կարգել ի պաշտաւն եպիսկոպոսութեան և քորեպիսկոպոսութեան, և զորս ոչ» վերնագրի դիմաց համապատասխան կանոնների կարգահամարների մեջ նշված է նաև ՌՄԾ (= տպ. ՌՄԾԸ)[14] կարգահամարը, որը ԽԱ (41) համարի ներքո գտնվող □Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի և թարգմանչի աշակերտ եղելոյ սրբոյն Սահակայ Մեծի հայրապետի Հայոց կաթողիկոսի բան կանոնական. Գլուխ Ա□[15] կանոնախումբն է: Այսինքն՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձեռագրերի Ա խումբը, մինչև XI դարի կեսերն իրականացված խմբագրությունը, ընդգրկել է 41 կանոնախումբ[16], որոնց հիման վրա էլ վերաձևվել է ձեռագրերի Բ խումբը: Բ խմբի ձեռագրերի ցանկերում Հովհաննես Մանդակունու վերոնշյալ կանոնախումբը գտնվում է ԼԳ (33)[17] կամ ԼԹ (39)[18] համարների ներքո: Իսկ եթե հաշվի առնենք նաև «Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի Գիր աւանդութեան» բնագիրը, որ արտացոլված չէ ՄՄ 656, 646, 8380 (և վերջինիս ենթախմբին հարող մյուս ձեռագրերի), 9513 ձեռագրերի ցանկերում[19], բայց առկա է բուն բնագրում, ապա պարզ կլինի, որ ձեռագրերի Բ - խումբը սկզբում բաղկացած է եղել 43 կանոնախմբերից (ցանկերում՝ Ա–Խ)՝ Ա. Կանոնք առաքելականք... ԽԳ. Եղիշեի «Վասն դիւահարաց»: Վերջինս ընդգրկված չէ Ա խմբի ձեռագրերում:

Անդրադառնալով Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացման ժամանակի խնդրին՝ առավել ընդունելի ենք համարում Ռ. Վարդանյանի այն տեսակետը, ըստ որի ձեռագրերի Ա խմբի 35–40-րդ (41) կանոնախմբերն ավելացվել են X դարի կեսի – XI դարի կեսի՝ մինչև 1056–1059 թվականների խմբագրության ընթացքում: Իր տեսակետը Ռ. Վարդանյանը հիմնավորում է Նիկիայի վավերագրերի հերթական թարգմանության թվագրմամբ: Այս վավերագրերում նախկին հունիսի Կաղանդից 13 օր առաջվա ամսաթվի (մայիսի 20) և մարերի 22-ի փոխարեն տրված է հունվարի Կաղանդից 13 օր առաջվա ամսաթիվը (դեկտեմբերի 20) և մարերի 19-ը, որն էլ համընկնում է միայն 1056–1059

---

[14] *ԿՀ, հ. Ա, էջ 5: Ըստ Վ. Հակոբյանի՝ սա հետագայի հավելում է (նույն տեղում, տողատակ 1, էջ XXIII), մենք, սակայն, կարծում ենք, որ ի տարբերություն Վ. Հակոբյանի նշած մյուս կարգահամարների, այս կարգահամարը գրչության ժամանակ է գրվել:*

[15] *ԿՀ, հ. Բ, էջ 239:*

[16] *ԿՀ, հ. Ա, էջ 18–537, ԿՀ, հ. Բ, էջ 3–243:*

[17] *Բ խմբի վաղ ձեռագրերում, որտեղ □Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի. Գլուխք Թ□ կանոնախմբի հետ դրված է նույն համարի տակ (ՄՄ, ձեռ. 656, 6ա, 646, 4բ):*

[18] *Բ խմբի ձեռագրերի այն ենթախմբում, որտեղ առանձնացված է «Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի. Գլուխք Թ» կանոնախմբից և հանդես է գալիս առանձին համարով (ՄՄ, ձեռ. 2676, 1բ, 2677, 2բ):*

[19] *Այս ցանկերում Սահակի մյուս կանոնախմբերի հետ դրված է միևնույն վերնագրի ներքո (ՄՄ, ձեռ. 656, 6ա, 646, 4բ):*

թվականների քառամյակին[20]*: Այս ամենն արտացոլված է Նիկիայի կանոններին կից «Գլուխ հաւատոց ժողովոյն Նիկիայ»*[21] *բնագրում: Եթե Ա խմբի ձեռագրերում կարդում ենք «...յամսեանն* մարերի իբրև ԻԲ *էր ամսոյ,* յառաջ քան զԺԳ-ն կաղանդին յունի ամսոյ*...»*[22] *(ընդգծումը մերն է –* Ն. Վ.*), ապա Բ խմբի մեզ ծանոթ բոլոր ձեռագրերում գրված է «...յամսեանն* մարերի իբրև ԺԹ *էր ամսոյ,* յառաջ քան զԺԳ-ն կաղանդին յունուարի ամսոյ*...»*[23] *(ընդգծումը մերն է –* Ն. Վ.*), այսինքն՝ թարգմանիչներն իրենց ժամանակին համարժեք ամսաթվերն են ներմուծել այս բնագրի հերթական թարգմանության ժամանակ: Այս փաստն էլ մեզ հիմք է տալիս կարծելու, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը 43 կանոնախմբերի շրջանակում առաջացել է 1056–1059 թվականների ընթացքում:*

Ձեռագրերի Բ խմբի հետագա ընդլայնումը, ըստ Վ. Հակոբյանի, տեղի է ունեցել 2 փուլով: Այսպես, նա կարծում է, որ Բ խմբի նախնական 40 կանոնախմբերին սկզբում ավելացվել են ԽԱ(41) – ԿԵ(65) կանոնախմբերը «... մինչև Գևորգ Երզնկացին... մի անհայտ անձնավորության կողմից»[24]*, ինչը, ըստ նրա, արտացոլված է այս խմբի, իր բաժանմամբ, Բ ենթախմբի՝ hlou (ՄՄ, 3368, 8938, 660, 9769) ձեռագրերում, քանզի այստեղ, թեև բովանդակության ցանկը [որ պահպանվել է միայն 1 (ՄՄ, 8938) ձեռագրում] բաղկացած է it ձեռագրերում պահպանված 40 կանոնախմբերի վերնագրերից, սակայն բուն ձեռագրերում ընդգրկված են այլ կանոնախմբեր ևս, որոնք ներկայացնում է ըստ 1 ձեռագրի: Այստեղ վերջինը ԿԵ (65) համարի ներքո դրված Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբն է: Հետևաբար, ըստ Վ. Հակոբյանի, «hlou ենթախմբի շարունակությունը կազմող նյութերը (41–65 կանոնախմբերը –* Ն. Վ.*) Կանոնագրքի ավելացման մի այլ թևի... առաջին շերտն է, որը հանդես է եկել X դարի 90-ական թվականների և XIV դարի կեսերի միջոցում□, ընդգրկելով և՛ Ա խմբի՝ XI դարի խմբագրության մեջ ներառված որոշ կանոնախմբեր, և՛ դրա մեջ չմտած բնագրեր*[25]*: Իսկ ավելացումների երկրորդ շերտը՝ նախորդ ենթախմբերի Ա–ԿԵ կանոնախմբերին նոր կանոնախմբերի հավելմամբ, ըստ Վ. Հակոբյանի առկա է Գ ենթախմբում՝ asdkmpsv (ՄՄ, 7615, 8964, 2676, 654, 2677, 3544, 3098, 10137) ձեռագրերում, որտեղ թե՛ բովանդակության ցանկերում, թե՛ բուն ձեռագրերում առկա են ՀԸ (78) կանոնախմբեր: Այս կանոնախմբերը նա ներկայացնում է ըստ m (ՄՄ, 2677) ձեռագրի*[26] *և հիմք ընդունե-*

---

[20] *Ըստ Ռ. Վարդանյանի բանավոր հաղորդման:*
[21] *ԿՀ, հ. Ա, էջ 133–150:*
[22] *Նույն տեղում, էջ 133:*
[23] *Նույն տեղում, էջ 133, տողատակ 4:*
[24] *ԿՀ, հ. Բ, Ներածություն, էջ XXXVI:*
[25] *Տե՛ս նույն տեղում, էջ XXXI–XXXII:*
[26] *Նույն տեղում, էջ XXXII–XXXIII:*

լով Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի 43 թվահամարի ձեռագրում պահպանված Հակոբ Ղրիմեցու հիշատակարանի վկայությունը[27] *(այս հիշատակարանի մասին կխոսենք ստորև)՝ եզրակացնում, որ ԿԶ (66)–ՀԸ (78) կանոնախմբերն ավելացրել է Հակոբ Ղրիմեցու ուսուցիչ Գևորգ Երզնկացին, և այդ կանոնախմբերն ընդգրկող Գ ենթախմբի ձեռագրերը, որ ունեն XIV– XV դարերի հնություն, «պատկանում են Կանոնագրքի Գեորգ Երզնկացու խմբագրությանը»*[28]*: hlou և asdkmpsv ենթախմբերի միջանկյալ օրինակ է համարում r (ՄՄ, 9513) ձեռագիրը, որի ցանկում ընդօրինակված են միայն 40 կանոնախմբերի վերնագրերը, իսկ բուն ձեռագրում առկա են այս խմբի 78 կանոնախմբերը:*

Մեր կարծիքով, սակայն, Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ԽԱ (41), հետագայում արդեն՝ «ԽԷ (47)[29] *Յովհաննու Կոստանդնուպօլսի հայրապետի. Գլուխ Ա. ... ՀԸ (78) Վասն քահանայագործութեան կարգաց պատրաստութիւն» կանոնախմբերն*[30] *ավելացվել են միաժամանակ, միևնույն անձնավորության կողմից:*

Այս տեսակետի համար կռվան են հանդիսանում նախ hlou ձեռագրերն իրենց կառուցվածքային և բնագրային առանձնահատկությամբ: Այս ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ XVII դարի տարբեր ժամանակահատվածներում ընդօրինակված այս ձեռագրերի մայր օրինակը նույնն է եղել: Այսպես՝ վերը նշված 4 ձեռագրերում էլ ԺԳ (13) համարի ներքո գտնվող, Գրիգոր Աստվածաբանի անունով հայտնի կանոնախումբն ընդօրինակված է մինչև ԻԱ (21) կանոնի «…զի մի արմատ դառնութեան ի վեր երեւալ» հատվածը[31]*, իսկ ԻԲ (22) – Լ (30) կանոններն ընդօրինակված չեն: Այս ձեռագրերում նույն ընթերցումն ունի նաև Մելիտոնի կանոնախմբի խորագրի ընդգծված հատվածը՝ «Մելիտոսի եպիսկոպոսի թուղթ* առ Տոյ*...»*[32] *(ընդգծումը մերն է – Ն. Վ.), մինչդեռ ձեռագրերի մեծ մասում այն այս կերպ է. «... առ Տրիպիս»*[33]*: Իսկ ԺԸ (18) համարի ներքո գտնվող «Կանոնք Ներսէսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսին» կանոնախմբի երկրորդ խորագրին կից բոլոր 4 ձեռագրերում էլ գրված է. «... փառք*

---

[27] *Նույն տեղում, էջ XXXIV:*

[28] *Նույն տեղում, էջ XXXVI:*

[29] *41՝ ըստ այս խմբի ձեռագրերի նախնական ցանկերի, իսկ հետագա ցանկերում արդեն՝ ԽԷ, նախկինում մեկ վերնագրի տակ համախմբված նույն հեղինակի տարբեր կանոնախմբերի տարանջատման արդյունքում:*

[30] *Ավելացված մնացյալ կանոնախմբերի վերնագրերը տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, կազմեց Օ. Եգանյան, Երևան, 2007, սյունակ 213–216:*

[31] *ՄՄ, ձեռ. 660, թ. 280բ, հմմտ. ՄՄ, ձեռ. 3368, թ. 71բ, 8938, թ. 77ա, 9769, թ. 68ա:*

[32] *ՄՄ, ձեռ. 660, թ. 267ա, հմմտ. ՄՄ, ձեռ. 3368, թ. 213բ, 8938, թ. 216բ, 9769, թ. 208բ: Այս ընթերցումն ունի նաև ՄՄ 9513 (r) ձեռագիրը:*

[33] *ԿՀ, հ. Բ, էջ 285, տողատակ 1:*

Աստուծոյ ՃՌ. անգամ յաղագս ամենայնի»[34]*: Ամենից ուշագրավն այն է, սակայն, որ այս 4 ձեռագրերի ընդօրինակումը թերի է և ընդհատված է միևնույն հատվածում՝ «... և քահանայն զՆորոյ ուխտիս եկեղեցոյ սրբոյ, որ չիշխեն կալ անարժանքն կամ զինուորքն»*[35]*, որ է Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախմբի Բ (2) կանոնի մի մասը, թեև խորագրին կից նշվում է կանոնների քանակը «... Գլուխ Է»*[36]*: Այսինքն՝ ակնհայտ է, որ ընդօրինակությունը կիսատ է մնացել, և բացառված չէ, որ եթե այն շարունակվեր, ապա այս ձեռագրերը ևս կընդգրկեին 78 կանոնախմբեր, ինչպես և ՄՄ 9513 թվահամարի ձեռագիրը: Բացի այդ, ակնհայտ է, որ Բ խմբի երկրորդ խմբագրողն օգտվել է Ա խմբի 58 կանոնախմբից բաղկացած տարբերակից, որտեղ վերջինը՝ 58-րդը, Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբն է: Բ խմբում այն 65-րդն է, որից հետո ավելացված ենք տեսնում Ա խմբի 58-րդ կանոնախմբից առաջ գտնվող այլ կանոնախմբեր ևս: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ «Կանոնք երանելւոյն Եպիփանու Կիպրացւոյ եպիսկոպոսի մեծի եւ առաքինւոյ մարգարէի եւ նշանագործի»*[37] *կանոնախումբը ձեռագրերի Բ խմբում բաժանված է երկու մասի տարբեր համարների ներքո՝ ԾԴ (54) և ԿԷ (67): Բ խմբի նախնական տարբերակներում կամ դրանցից ընդօրինակված ձեռագրերում 54-րդ կանոնախմբի խորագրին կից կանոնների քանակը Ա խմբի հետևողությամբ նշված է «Գլուխ Գ»*[38] *կամ «Գլուխ երեք»*[39]*, թեև այդ համարի ներքո ընդօրինակված են Ա (1) և Բ (2) կանոնները միայն, իսկ երրորդը՝ «Հարցումն քահանայի եկեղեցւոյն Կեսարու առ երանելին Եպիփան ի Կիպրոս»*[40] *խորագրով, դրված է 67-րդ համարի ներքո, քանզի խմբագրողը ԿԶ (66) – ԿԹ (69) համարների ներքո համախմբել է պահքին վերաբերող մի քանի կանոնախմբեր, այդ թվում և վերջինս, այսինքն՝ կատարել է բովանդակային բաժանում: Հետևաբար, սա ևս մեկ ապացույց է, որ Բ խմբի ԽԱ (41) – ՀԸ (78) կանոնախմբերն ավելացվել են միաժամանակ, միևնույն անձնավորության կողմից, որը, մեր խորին համոզմամբ, չէր կարող լինել Գևորգ Երզնկացին, ինչպես կարծում է Վ. Հակոբյանը (66 – 78 կանոնախմբերի պարագայում), քանզի Բ խմբի՝ մեզ հասած հնագույն ՄՄ 7615 թվահամարի ձեռագիրը (ա՝ ըստ Վ. Հակոբյանի), որ ընդօրինակվել է 1352 թ.՝ «ՊԱ.*

---

[34] *ՄՄ, ձեռ. 660, թ. 122բ , հմմտ. ՄՄ, ձեռ. 3368, թ. 102բ, 8938, թ. 109բ, 9769, թ. 98ա (այստեղ չիք՝ «ՃՌ»):*

[35] *ՄՄ, ձեռ. 660, թ. 270բ, հմմտ. ՄՄ, ձեռ. 3368, թ. 216ա, 8938, թ. 218բ, 9769, թ. 211ա:*

[36] *ՄՄ, ձեռ. 660, թ. 268բ, հմմտ. ՄՄ, ձեռ. 3368, թ. 214բ (այստեղ՝ «...Գլուխ Ե»), 8938, թ. 217ա, 9769, թ. 209բ (այստեղ՝ «...Գլուխ Ե»):*

[37] *ԿՀ, հ. Բ, էջ 268:*

[38] *ՄՄ, ձեռ. 7615, թ. 224բ, 8236, թ. 153բ, 8938, թ. 210ա և այլն:*

[39] *ՄՄ, ձեռ. 9513, թ. 240բ:*

[40] *ՄՄ, ձեռ. 7615, թ. 239ա–40ա և այլն:*

թվին»[41], արդեն իսկ բովանդակում է վերոնշյալ 78 կանոնախմբերը թե՛ բովանդակության ցանկում, թե՛ առարկայական ցանկում: Բացի այդ՝ ՄՄ 3276 թվահամարի ձեռագրում[42] ընդօրինակված է մի քաղվածո Կանոնագիրք[43], որտեղ գրիչը կամ նախագաղափար օրինակի գրիչը յուրաքանչյուր կանոնախմբից իրեն հետաքրքրող կանոններն է ընդօրինակել միայն, իսկ չօգտագործած կանոնախմբերի համապատասխան վայրերում թողել է այսպիսի ծանուցումներ՝ «Կանոնք Եփրեմի ոչ գրեցաւ»[44], «Կանոնք Սահակայ վերջնոյ Հայոց կաթողիկոսի ոչ գրեցաւ»[45], «Յոհաննու Ոսկեբերանին, Մեծի Ագաթանգեղոսի ի Բանէն, որ զԿայենէ եւ Մեսրոպա Հայոց հայրապետին (վարդապետի – Ն. Վ.) ոչ գրեցաւ»[46] և այլն: Այս ամենը թույլ է տալիս վերականգնել օգտագործված Կանոնագրքի կառուցվածքը, որն էլ համընկնում է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբին՝ 78 կանոնախմբերի սահմաններում: Այս Կանոնագիրքն ընդօրինակվել է 1355 թվականի նախօրինակից, ինչի մասին էլ վկայում է նախագաղափարի հիշատակարանը. «Կատարեցաւ կանոնական գիրքս ի դառն եւ ի դժնեա ժամանակիս ... ի քաղաքս Երզնկայ ... Բայց գրեցաւ սա ՊԴ (1355) թվին, յամսեանն օգոստոսի Դ (4) ...»[47]: Այսպիսով՝ 1352, 1355 թվականներով թվագրված, Բ խմբին պատկանող այս Կանոնագիրք ձեռագրերը, որոնք արդեն իսկ ընդգրկում են 78 կանոնախմբերը, հիմք են տալիս մեզ պնդելու, որ այս խմբի 40 (ըստ ցանկի) կանոնախմբերից հետո իրականացված խմբագրությանը Գևորգ Երզնկացին (1350?– 1416 թթ.) չի մասնակցել, քանի որ նա ծնվել է 1350-ական թվականներին[48], հետևաբար, չէր կարող լինել այդ խմբագրությունն իրականացնողը:

Մենք կարծում ենք, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը 78 կանոնախմբերի սահմաններում ձևավորվել է XIII դարում, կիլիկյան նշանավոր մատենագիր, քաղաքական և եկեղեցական գործիչ, վարդապետ Գևորգ Սկևռացու (Լամբրոնացու, 1245–1301 թթ.) խմբագրության արդյունքում: Այս մասին անուղղակի վկայություն է պահպանվել 1609 թ. Կ. Պոլսում ընդօրինակված, Բ խմբին պատկանող, Անկյուրիայի Կարմիր

---

[41] *ՄՄ, ձեռ. 7615, թ. 14բ, (գրված առարկայական ցանկի վերջում):*

[42] *Ձեռագիրը յուրահատուկ մի ժողովածու է՝ ընդօրինակված XVII դարում, որտեղ մեկտեղված տարաբնույթ բնագրերի նախագաղափար հիշատակարանները հուշում են, որ դրանք ընդօրինակված են XI–XIV դարերի նախագաղափար օրինակներից:*

[43] *ՄՄ, ձեռ. 3276 , թ. 1ա, 151ա–191ա:*

[44] *Նույն տեղում, թ. 174ա:*

[45] *Նույն տեղում, թ. 180ա:*

[46] *Նույն տեղում, թ. 183ա:*

[47] *Նույն տեղում, թ. 191ա:*

[48] *Ն. Պ ո ղ ա ր յ ա ն. Հայ գրողներ Ե–ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 406, նաև Հ. Քյ ո ւ ր տ յ ա ն, Երիզա և Եկեղյաց գավառ. պատմական համագրություն, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 303:*

վանքի 43 թվահամարի ձեռագրի նկարագրության մեջ[49] *պահպանված, 1611 թվականից հետո ընդօրինակված Կանոնագրքի հիշատակարանում, որտեղ Հակոբ Քյոթահիացին գրում է. «… տեսի անդ կանոնս, կատարեալ գիր կանոնաց,* զոր հաւաքեալ էր զկանոնս առաքելոց, վարդապետաց, հայրապետաց սրբոց սուրբ վարդապետն Գէորգ Կիլիկեցին, որ է Սսեցին»[50] *(ընդգծումը մերն է – Ն. Վ.):*

Մեր կարծիքով՝ այս խմբագրության ժամանակ ոչ միայն ավելացվել են վերոնշյալ կանոնախմբերը, այլև լրացվել ու ընդարձակվել են բովանդակության և առարկայական ցանկերը: Դրա վառ ապացույցն են որոշ ձեռագրերում, այդ թվում՝ այս խմբի հնագույն՝ ՄՄ 7615 թվահամարի ձեռագրում[51]*, այդ ցանկերից հետո պահպանված համապատասխան վկայությունները. «Միաբան գումարեցաւ զլուխ կանոնացս համարով ՀԸ (78) և բովանդակ վկայութիւնքն, որ աստ կան միաբան ՌՇԻԷ …»*[52]*, «Գումարեցան ճառքս և կանոնքս և բովանդակեցան համարով ՄՂ և վկայութիւնք որ աստ կան ՌՇԻԷ»*[53]*:*

Ինչ վերաբերում է Գևորգ Երզնկացու կատարած աշխատանքներին՝ նշված Հակոբ Ղրիմեցու (1360–1426 թթ.) հիշատակարանում, որը, որպես նախագաղափար հիշատակարան, ընդօրինակված գտանք ՄՄ 3788 թվահամարի ձեռագրում[54]*՝ Բ խմբին պատկանող Կանոնագրքին կից. «Արդ, աղաչեմք զորդիքդ լուսոյ և զմանկունքդ Նոր Սիօնի… յառաչմամբ սրտիւ յիշատակել առ Աստուած զարժանն յիշատակելոյ, զերիցս երանեալ երջանիկ ռաբունին, զպետն վարժից և զքաջ փաղերայն հայկազեան սեռիս,* ըզմեծ հռետորն Գէորգ, որ ի պակասն գրոցս շատ աշխատեցաւ և գրեաց բազմաշնորհ մատամբն իւրով առ ի կատարել զթերին*…»*[55] *(ընդգծումը մերն է – Ն. Վ.): Կարծում ենք, որ եթե այստեղ խոսքը չի վերաբերում որևէ կոնկրետ Կանոնագիրք ձեռագրի թերին լրացնելուն, ապա, հավանաբար, Գևորգ Երզնկացին իր սրբագրական աշխատանքները կատարել է Բ խմբի՝ արդեն իսկ համախմբված 78 կանոնախմբերի շրջանակում:*

Այսպես՝ Սահակ Պարթևի «Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի. Գլուխք ԾԵ» կանոնախումբը ձեռագրերի Ա խմբում հանդես է գալիս որպես մեկ ամբողջական կանոնախումբ[56]*, իսկ ձեռագրերի Բ*

---

[49] *Բ ա բ կ է ն ա թ ո ռ ա կ ի ց կ ա թ ո ղ ի կ ո ս. Յուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 229–268:*

[50] *Նույն տեղում, էջ 266:*

[51] *Ձեռագրի սկզբի թերթերն ընկած են, պահպանվել է միայն առարկայական ցանկի համապատասխան նշումը:*

[52] *ՄՄ, ձեռ. 8964, թ. 2բ:*

[53] *ՄՄ, ձեռ. 7615, թ. 14բ:*

[54] *Վ. Հակոբյանն օգտվել էր Անկյուրիայի Կարմիր վանքի 43 թվահամարի ձեռագրի նկարագրությունից:*

[55] *ՄՄ, ձեռ. 3788, թ. 88բ:*

[56] *ԿՀ, հ. Ա, էջ 363–421:*

խմբում բաժանված է 4 առանձին կանոնախմբերի: Սակայն եթե Բ խմբի հնագույն օրինակներում և դրանցից ընդօրինակված ձեռագրերում ցանկն ընդհանուր է՝ Ա–ԾԵ, և դրված է առաջին՝ (ԻԹ) 29-րդ կանոնախմբից առաջ[57], ապա հետագայի օրինակներում ցանկն առանձնացված է յուրաքանչյուր կանոնախմբից առաջ՝ առանձին համարակալմամբ[58]: Այսպես է նաև Բարսեղ Կեսարացու «Կանոնք Բարսղի առ Ամփիւղոքոս. Գլուխք ԾԱ» կանոնախմբի պարագայում: Եթե հնագույն օրինակներում և դրանցից ընդօրինակված ձեռագրերում ցանկը տրված է միասնական ԾԱ գլուխներով[59] նաև հաջորդ՝ «Գիր կանոնական սրբոյն Բարսղի առ քահանայ մեծ Դիոդորոս Անտիոքայ ...» միավորի համար, որն արդեն իսկ առանձնացված է որպես առանձին կանոնախումբ՝ ի տարբերություն Ա խմբի, որտեղ որպես մեկ կանոնախումբ են հանդես գալիս, ապա հետագայի օրինակներում երկրորդ միավորն առանձնացված է առանձին ցանկով և համարակալմամբ[60]: Հատկանշական է նաև այն, որ նախնական օրինակներում Հովհաննես Օձնեցու ժողովածու չմտած, Ա խմբի ձեռագրերում ցանկ չունեցող կանոնախմբերն այստեղ ևս ցանկեր չունեն[61], իսկ հետագայի ձեռագրերում բոլոր կանոնախմբերն անխտիր ունեն ցանկեր[62]: Այսինքն՝ մեր կարծիքով, Հակոբ Ղրիմեցու նշած աշխատանքները, որ կատարել է Գևորգ Երզնկացին, նշված սրբագրական աշխատանքներն են արդեն իսկ գոյություն ունեցող 78 կանոնախմբերի սահմաններում՝ իրականացված մինչև 1392 թվականը: Սա հիմնավորվում է այն փաստով, որ ՄՄ 3788 թվահամարի ձեռագրում, Հակոբ Ղրիմեցու հիշատակարանից բացի, ընդօրինակված են այլ նախագաղափար հիշատակարաններ ևս, որոնցից մեկում նշված է և՛ ընդօրինակության ժամանակը, և՛ գրչության վայրը. «... Արդ գրեցաւ սա ի վանս Գոփորու (Գորոբու – Ն. Վ.) սուրբ Թէոդորոսս[63] ... ի թվին Հայոց ՊԽԱ (1392)»[64]: Այսինքն՝ 1392 թվականին արդեն Գևորգ Երզնկացին իրականացրել էր Հակոբ Ղրիմեցու նշած աշխատանքները:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը 43 (ըստ ցանկի՝ 40) կանոնախմբերի սահմաններում կազմավորվել է 1056–1059 թվականների ընթացքում, իսկ արդեն XIII դարում Գևորգ Սկևռացին այդ տարբերակին հավելել է այս խմբի 41 (ըստ ցանկի)–78 կանոնախմբերը միաժամանակ, որտեղ եղած թերությունները շտկել և սրբագրական աշխատանքներ է կատարել Գևորգ Երզնկացին մինչև 1392 թվականը: Այսինքն՝ սկիզբ առնելով ձեռագրերի Ա խմբից՝ ձեռագրերի Բ խումբը շարունակել է զարգանալ և հավասարապես գործածվել է հայ եկեղեցում, ինչի վկայությունն են ընդօրինակված բազմաթիվ ձեռագրերը թե՛ Հայաստանում, թե՛ հայկական գաղթավայրերում:

---

[57] *ՄՄ, ձեռ. 8964, թ. 138բ–152բ, 8938, թ. 148ա–163բ և այլն:*

[58] *ՄՄ, ձեռ. 654, թ. 155բ–168բ, 2677, թ. 160բ–176ա և այլն:*

[59] *ՄՄ, ձեռ. 8964, թ. 77ա–84բ, 8938, թ. 77ա–85ա և այլն*

[60] *ՄՄ, ձեռ. 654, թ. 78ա–86ա, 2677, թ. 88ա–96ա և այլն:*

[61] *ՄՄ, ձեռ. 8964, թ. 35բ–40բ և այլն, 8938,թ. 33ա–37բ և այլն:*

[62] *ՄՄ, ձեռ. 654, թ. 26բ–33բ, 2677, թ. 39ա–45ա և այլն:*

[63] *Գտնվել է Երզնկա քաղաքից մոտ 30 կմ արևելք (տե՛ս Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1968, էջ 956):*

[64] *ՄՄ, ձեռ. 3788, թ. 92բ, նաև թ. 101ա, 160բ:*

ФОРМИРОВАНИЕ РУКОПИСНОЙ ГРУППЫ «Б» КНИГИ КАНОНОВ И ЕЕ ДАЛЬНЕЙШАЯ РЕДАКЦИЯ В РАМКАХ 78-И КАНОНИЧЕСКИХ ГРУПП

НАРИНЕ ВАРДАНЯН

Р е з ю м е

Рукописная группа «Б» армянской «Книги канонов» образовалась где-то между 1056 и 1059 гг. В нее вошли 41 канонические группы (составляющие рукописную традицию «А» того времени), которые были пересоставлены в хронологическом порядке, и каноническая группа Егише «Об одержимых». Рукописная группа «Б» получила свой окончательный вид в рамках 78-и канонических групп в XIII в., в результате редакции, проделанной знаменитым армянским ученым, вардапетом, политическим и церковным деятелем Геворгом Скевраци (Ламбронаци) (1245–1301). Косвенно на это указывает сведение Акоба Кютаиаци 1611 года, в котором отмечено, что эти каноны собрал «...Геворг Киликийский, он же Ссеци». А уже в XIV веке, до 1392 года, летописец, вардапет Геворг Ерзнкаци (1350?–1416) откорректировал рукописную группу «Б» «Книги канонов» в рамках этих 78-и канонических групп, о чем и свидетельствует памятная запись его ученика Акоба Крымеци (1360–1426), указывающая, что его учитель Геворг «работал много и восполнил недостающее в тексте».

THE FORMATION OF THE MANUSCRIPT TRADITION “B” OF THE BOOK OF CANONS AND ITS FURTHER EDITION IN THE FRAMES OF 78 CANON GROUPS

NARINE VARDANYAN

S u m m a r y

The manuscript tradition “B” of the *Kanonagirk* (“Corpus of *Canon Law*”) was formed somewhere between the years of 1056 and 1059. It contained the 41 canon groups (from which consisted the manuscript tradition “A” at that time), which were rearranged chronologically, and the canonic group “About Possesseds ” by Yeghishe. The manuscript tradition “B” got its final shape in the frames of 78 canon groups in the 13th century, as a result of editorial work done by the famous Cilician scientist, vardapet, politician and priest Gevorg Skevratsi (Lambronatsi) (1245–1301). It is evidenced thanks to the indirect information by Jacob Kyutayatsi in 1611, where he testified that these canons were collected by “... Gevorg Cilicetsi, i.e. Ssetsi”. Later on, in the 14th century (till 1392) annalist, vardapet Gevorg Yerznkatsi (1350?–1416) adjusted and specified the manuscript tradition “B” in the frames of 78 canon groups, as we learn from his student’s – Hakob Ghrimetsi’s (1360–1426) colophon that his teacher Gevorg “worked a lot and added what was missed in the text”.